ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/195

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարան
Մասնակից՝ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի
«Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Վարդանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17150-2020 գրությամբ «Էլեկտրոնիկ

Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 13.11.2020թ.-ի թիվ 180 գրության հիման վրա, 19.11.2020թ.-ին «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 19.11.2020թ.-ին:

19.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/195 համարի ծածկագիրը:

04.12.2020թ.-ին, 10.12.2020թ.-ին և 18.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.12.2020թ.-ին:

2. <u>ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանը 13.11.2020թ.-ի թիվ 180 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև N ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով կնքվել է Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների պայմանագիր ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ

հոդվածի 6-րդ մասի դրույթների հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում կնքել պայմանագրին կից համաձայնագիր: 2020 թվականի հուլիսի 23-ին կողմերի միջև կնքվել է 13800000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամի Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների պայմանագրին կից համաձայնագիր N 1:

2020 թվականի հոկտեմբերի 20-ին «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ծանուցվել և ներկայացվել է Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների պայմանագրին կից 2-րդ համաձայնագրի նախագիծը՝ 32200000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի ֆինանասական միջոցներ նախատեսված լինելու պատճառով: Սակայն 2020 թվականի նոյեմբերի 10-ին (ծանուցվելու 15-րդ աշխատանքային օրը, «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարան ներկայացվել է կնքված համաձայնագիրը, որում կատարվել է թվաբանական փոփոխություններ (32200000 ՀՀ դրամը փոխարինվել է 13800000 ՀՀ դրամով) և համաձայնագրում ու համաձայնագրին կից վճարման ժամանակացույցում առկա են թվաբանական սխալներ: «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված տուժանքի ձևով ներկայացված ապահովումները փոխարինելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի թիվ 168 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017թ.-ի մայիսի 4 թիվ 526-Ն ՀՀ կառավարության որոշման հավելված 1-ի 33-րդ կետի 12-րդ մասի դրույթները՝ 2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև N ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով կնքված Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝ առաջարկում եմ «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից ներկայացվում է պայմանագրի միակողմանի լուծմանը հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճեները:»:

3. <u>«Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 19.11.2020թ.-ի գրությամբ դիմել է «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17150-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 04.12.2020թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը 26.11.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հատնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 10.07.2020թ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ը, (այսուհետ Գապալառու), միջև կնքվել է ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2:

23.07.2020թ կողմերի միջև կնքվել է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1՝ 10.07.2020թ ԿՆՔՎԱԾ N ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ըստ «էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի 09.10.2020թ Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշվի կատարված է համարվել վերոնշյալ ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս կազմող 23.07.2020թ կնքված համաձայնագիր N 1-ի 13 800 000/տասներեք միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամի արժողությամբ աշխատանքները, որի արդյունքում պատվիրատուի կողմից 20.10.2020թ կապալառուի հաշվին է փոխանցել 4 140 000/չորս միլիոն հարյուր քառասուն հազար/ և / 9 660 000/ ինն միլիոն վեց հարյուր վաթսուն հազար / ՀՀ դրամ ընդհանուր 13 800 000 / տաս երեք միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար:

Ըստ Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի «Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի կամ կանխավճարի ապահովումը

վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

Տվյալ պարագայում պայմանագրով այլ բան է նախատեսված: Մասնավորապես կողմերի միջև կնքված է համաձայնագիր N 1, ըստ որի կողմերը համաձայնվել են պայմանագրի գնի մասնակի ֆինանսավորման պայմաններում կնքել 13 800 000 / տաս երեք միլիոն ու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի արժողությամբ աշխատանքների կատարման և համապատասխանաբար նույն չափի որակի ապահովման երաշխավորության և համապատասխան գնի 10 տոկոսի չափով պայմանգրի գնի ապահովման ներկայացման համաձայնագիր: Այսինքն առաջնորդվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի բովանդակության մեկնաբանությունից, պետք է նշված պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց հետո Կապալառուին 5 աշխատանքային օրվա ընթացքում հետ վերադարձվեր որակի ապահովման և պայմանագրի ապահովման երաշխիքները, որոնք եղել են կանխիկ մուտքի ձևով, ինչը չի կատարվել:

13.11.2020թ «էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին 2020թ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի կողմից ծանուցում է ուղղարկվել պայմանագիրը մասնակի լուծելու կապակցությամբ/ 32 200 000 ՀՀ դրամի չափով /: Հայտնում ենք, որ «էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձ Հասմիկ Կառլենի Հարությունյանը, ով հանդիսանում է ընկերության հաշվապահը և միարժամանակ գնումների մասով մասնագետ, երկրում տիրող Covid 19 հիվանդությամբ վարակվելն և մինչև 26.11.2020թ մեկուսացված է եղել և հնարավորություն չի ունեցել պայմանագրով ստանձնած պարտավորությունների կապակցությամբ արձագանքել Պատվիրատուի ծանուցումներին և համապատասխան գործողություններ իրականացնել:

Միարժամանակ պետք է արձանագրել, որ երկրում հայտարարված ռազմական դրությունը նույնպես ազդել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու կապակցությամբ:

Ելնելով կողմերի միջն կնքված պայմանագրի 7-րդ բաժնով սահմանված պայմաններից պետք է հարգելի համարել Կապալառուի կողմից պայմանագրի պայմանները ժամանակին չկատարելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի անբաժանելի մաս կազմող Համաձայնագիր N 1-ով ստանձնած պարտավորությունները կապալառուի կողմից ամբողջությամբ կատարելուց բացի, «էլեկտրոևիկ Գրուպ» ՍՊԸ-ն փաստացի ամբոջությամբ

կատարել է / ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՅԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՑՎԱԾ Է ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐԸ ՓԱՍՏԱՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՒՄ Է/ N ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 պայմանագրով ստանձնած աշխատանքները և հիմք ընդունելով պայմանագրի 8.5 կետի պայմանները.

Առաջարկում եմ՝

Վերադարձնել կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագիր 1-ով Պատվիրատուին կանխիկ ներկայացված որակի ապահովման և պայմանագրի ապահովման երաշխիքները կամ չվերադարձնել երաշխիքները և կնքել նոր համաձայնագիր N 2, նույն 13 800 000 / տաս երեք միլիոն ու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի և աշխատանքների կատարման մասով, հաշվի առնելով, որ Համաձայնագիր 2-ը կնքվելու է կողմերի միջև կնքված միևնույն ծածկագրով պայմանագրի կատարման կապակցությամբ:

Համաձայնագիր N 2-ով ստանձնած պարտակորությունները ամբողջությամբ կատարելուց հետո կնքել պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագիր N 3 պայմանագրի չկատարված աշխատանքների մնացորդ համարվող 18 400 000 /տասնութ միլիոն չորս հարյուր հազար / ՀՀ դրամ գումարի չափով:»:

«Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ն 10.12.2020թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզի Ծովակի համայնքապետարանի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ԼՕ-2020/265 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 13.11.2020թ.-ի թիվ N-180 գրությունը և կից փաստաթղթեր (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Պատվիրատուն 23/06/2020թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) հրապարակել է թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա իսկ գնման առարկան է եղել՝ Ծովակ համայնքի Խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետև նաև՝ Գնման առարկա):

1.2. ԳՄԱ (CPV) 45331117 ծածկագրով Գնման առարկան պարունակող գնումների պլանը Պատվիրատուն տեղեկագրում հրապարակել է 2020 թվականի հունիսի 22-ի ժամը 18:57-ին:

Պատասխանատու ստորաբաժանում սահմանելու մասին հրամանը տրվել է 2020 թվականի փետրվարի 7-ին:

Գնման առարկայի ձեռքբերման համար Գնման հայտը կազմվել է 2020 թվականի հունիսի 18-ին իսկ գնահատող հանձնաժողովը ստեղծվել է 2020 թվականի հունիսի 19-ին:

Գնահատող հանձնաժողովը Մրցույթի հրավերի տեքստը հաստատել է 2020 թվականի հունիսի 22-ի ժամը 09:30-ին

1.3. Մասնակցիը Մրցույթի շրջանակներում ճանաչվել է հաղթող (ընտրված մասնակից): Արդյունքում, 2020 թվականի հուլիսի 10-ին Մասնակցի և Պատվիրատուի (այսուհետև միասին նաև՝ Կողմեր) միջև կնքվել է թիվ ՀՀ-ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետև նաև՝ Պայմանագիր):

1.4. Պայմանագրի 8.15 կետը շարադրված է հետևյալ բովանդակությամբ «8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: (...):»:

1.5. Պայմանագրի շրջանակներում 2020 թվականի հուլիսի 23-ին կողմերի միջև կնքվել է թիվ 1 համաձայնագիր (այսուհետև նաև՝ Համաձայնագիր N 1): Համաձայնագիր N 1-ով նախատեսվել է 13800000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ՝ Պայմանագրով սահմանված՝ Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների որոշ մասի կատարման նպատակով:

1.6. 2020 թվականի հոկտեմբերի 20-ին կնքելու նպատակով Պատվիրատուն ուղարկել է Մասնակցին թիվ 2 համաձայնագիրը (այսուհետև նաև՝ Համաձայնագիր N 2): Համաձայնագիր N 2-ով նախատեսվում էր լրացուցիչ 32200000 (երեսուն երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, որի արդյունքում Պայմանագրով ընդհանուր

նախատեսված ֆինանսական միջոցները 2020 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ կազմում են 46.000.000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ:

1.7. Պատվիրատուի ուղարկած Համաձայնագիր N 1-ում և Համաձայնագիր N 2-ում գնման առարկայի ԳՄԱ (CPV) ծածկագիրն է 45331117:

1.8. 2020 թվականի սեպտեմբերի 25-ի դրությամբ Տեղեկագրում հրապարակված Պատվիրատուի գնումների պլանում ներառված ԳՄԱ (CPV) 45331117 ծածկագրով Գնման առարկայի համար նախատեսված ֆինասկան միջցների ընդհանուր գինը կազմում է 33580000 (երեսուներեք միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

1.9. 2020 թվականի սեպտեմբերի 25-ից հետո Տեղեկագրում գնումների պլան Պատվիրատուն չի հրապարակել:

1.10. Համաձայնագիր N 2-ում նշված չէին կատարման ենթակա աշխատանքների ծավալները:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև նաև՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասի. «1. Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից,(...):»:

Համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 16-րդ կետի. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (...):»:

Նշյալից հետևում է, որ գնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում: Այսինքն, գնման առարկայի գնման գործընթացը սկսելու օրը, տվյալ գնման առարկան պարունակող գնումների պլանը պետք է լինի հրապարակված Տեղեկագրում: Փաստորեն եթե գնման առարկան պարունակող գնումների պլանը հրապարակված չէ Տեղեկագրում, ապա գնման գործընթացը կազմակերպողը իրավունք չի սկսել գնման գործընթացի կազմակերպման գործընթացը:

Ինչպես երևում է, սույն գործի փաստերից Պատվիրատուն Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակել է 2020 թվականի հունիսի 22-ի

ժամը 18:57-ին, այն պայմաններում երբ գնման գործընթացը սկսել է իրականացնել 2020 թվականի փետրվարի 07-ից, մասնավորապես՝

պատասխանատու ստորաբաժանում սահմանելու մասին հրամանը տրվել է 2020 թվականի փետրվարի 7-ին,

Գնման առարկայի ձեռքբերման համար Գնման հայտը կազմվել է 2020 թվականի հունիսի 18-ին, իսկ գնահատող հանձնաժողովը ստեղծվել է 2020 թվականի հունիսի 19-ին,

իսկ Մրցույթի հրավերի տեքստը Գնահատող հանձնաժողովը հաստատել է 2020 թվականի հունիսի 22-ի ժամը 09:30-ին:

Վերոգրյալից հետևում է, որ Մրցույթի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանումը, Գնման հայտը և Մրցույթի հրավերի տեքստը հաստատվել են խախտելով Կարգի և օրենսգրքի վերը նշված նորմերը:

2.2 Համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 17-րդ և 18-րդ կետերի. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

18. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված (...), աշխատանքների կատարման (...) նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Վերոգրյալից հետևում է, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պատվիրատուն տվյալ ընթացակարգի շրջանակներում ձեռբերման եթակա գնման առարկան գնումների պլանում պետք է ներառի առանց նշելու դրա ընդհանուր գինը, այն պայմանով, որ պայմանագիրը կնքելուց հետո ֆինասկան միջոցներ նախատեսվեու դեպքում գնումների պլանում պետք է

կատարվի համապատասխան փոփոխություն: Իսկ փոփոխությունը անհրաժեշտ է կատարել համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Որից հետո միայն, Պատվիրատուի մոտ ծագում է իրավունք՝ ֆինասական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը 15 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել պայմանագրի մյուս կողմին:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից Համաձայնագիր N 2-ով ընդանուր նախատեսված ֆինանսական միջոցների գինը կազմում է 46000000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ, սակայն Համաձայնագիր N 2-ը ուղարկելու պահին Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում Գնման առարկայի համար նախատեսված էր ընդամենը 33580000 (երեսուներեք միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: Այսինքն, Համաձայնագիր N 2-ը ուղարկելու պահին գնումների պլանում համաձայնագրում նշված գումարի չափով ֆինանսական միջոցներ չեն եղել նախատեսված: Ստացվում է, որ Պատվիրատուն իրավունք չուներ Համաձայնագիր N 2-ը հաստատման նպատակով ուղարկել Մասնակցին:

3. Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2020/265 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.07.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբ է համարվում կողմերի միջև պայմանագրի շրջանակներում տվյալ աշխատանքների մասով կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 120-րդ օրացուցային օրը ներառյալ:

iii. Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 46 000 000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ:

iv. Պատվիրատուն 13.07.2020թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

v. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.07.2020թ.-ին կնքվել է Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ թիվ 1 համաձայնագիր):

vi. Թիվ 1 համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ 13 800 000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

vii. Նույն համաձայնագրի թիվ 1 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով՝ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 45331117:

viii. Պատվիրատուն 11.11.2020թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրի նախագիծը՝ (այսուհետ նաև՝ թիվ 2 համաձայնագիր) մասնակցի կողմից ստորագրելու և համաձայնագրին համապատասխան երաշխիքների՝ որակավորման ու պայմանագրի ապահովման հետ միասին՝ կից գրությամբ Ծովակի համայնքապետարան ներկայացնելու համար:

ix. Թիվ 2 համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ 32 200 000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, որի արդյունքում ընդհանուր նախատեսված ֆինանսական միջոցները կազմում են 46 000 000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ:

x. «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կնքված և ստորագրված տարբերակով, Պատվիրատուին է ներկայացվել թիվ 2 համաձայնագիրը՝ փոփոխված ձևով, այն է՝ համաձայնագրի 1-ին կետով նախատեսված գումար փոխարեն նշվել է 13 800 000

(տասներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև չի ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները:

xi. Նույն համաձայնագրի թիվ 1 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով՝ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 45331117:

xii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.11.2020թ.-ին հրապարակված «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ 2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ ԳՄ-Ծ2-Գ2ՍՇՁԲ-20/2» ծածկագրով Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների պայմանագիր: 2020 թվականի հուլիսի 23-ին կողմերի միջև կնքվել է 13 800 000 (տասներեք միլիոն ութ հարյուր հագար) ՀՀ դրամի պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիրը: 2020 թվականի հոկտեմբերի 20-ին «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ն ծանուցվել և ներկայացվել է Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների պայմանագրին կից 2-րդ համաձայնագրի նախագիծը՝ 32 200 000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի ֆինանասական միջոցներ նախատեսված լինելու հիման վրա: Սակայն 2020 թվականի նոյեմբերի 10-ին (ծանուցվելու 15-րդ աշխատանքային օրը, «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Ծովակի համայնքապետարան է ներկայացվել կնքված համաձայնագիրը, որում կատարվել է թվաբանական փոփոխություններ (32 200 000 ՀՀ դրամը փոխարինվել է 13 800 000 ՀՀ դրամով) և համաձայնագրում ու համաձայնագրին կից վճարման ժամանակացույցում առկա են թվաբանական սխալներ: «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ն կողմից չի ներկայացվել որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով միակողմանի հաստատված տուժանքի ձևով ներկայացված ապահովումները փոխարինելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի թիվ 168 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017թ.-ի մայիսի 4 թիվ 526-Ն ՀՀ կառավարության որոշման հավելված 1-ի 33-րդ կետի 12-րդ մասի դրույթները՝ 2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև թիվ «ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով կնքված Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների պայմանագիրը կհամարվի մասնակի

լուծված 32 200 000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

xiii. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի կողմից 13.07.2020թ.-ին հաստատված և 16.07.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45331117, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 13 800 000, չափման միավորը՝ դրամ, իսկ նույն՝ 45331117 (CPV) կոդով խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար (սուբվենցիա 70%) գումարը նշվել է 0 ՀՀ դրամ:

xiv. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի կողմից 24.09.2020թ.-ին հաստատված և 25.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45331117, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 13 800 000, չափման միավորը՝ դրամ, իսկ նույն՝ 45331117 (CPV) կոդով խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար (սուբվենցիա 70%) գումարը նշվել է 32 200 000 ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17150-2020 գրությամբ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ

ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ծովակ համայնքի Խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 120 օր:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3-րդ կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3-րդ կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.07.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 46 000 000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ: ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.07.2020թ.-ին կնքված Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 Համաձայնագրի համաձայն՝ նախատեսվել են ֆինանսական միջոցներ 13 800 000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար չափով: Պատվիրատուն 11.11.2020թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրի նախագիծը՝ մասնակցի կողմից ստորագրելու և համաձայնագրին համապատասխան երաշխիքների՝ որակավորման ու պայմանագրի ապահովման հետ միասին՝ կից գրությամբ Ծովակի համայնքապետարան ներկայացնելու համար: Թիվ 2 համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ 32 200 000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, որի արդյունքում ընդհանուր նախատեսված ֆինանսական միջոցները կազմում են 46 000 000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ: «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կնքված և ստորագրված տարբերակով, Պատվիրատուին է ներկայացվել թիվ 2 համաձայնագիրը փոփոխված ձևով, այն է՝ համաձայնագրի 1-ին կետով նախատեսված գումար փոփխարեն նշվել է 13 800 000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև չի ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.11.2020թ.-ին հրապարակված «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ 2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև թիվ «ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով կնքված Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման

աշխատանքների պայմանագիրը համարվել է մասնակի լուծված 32200000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Վերոգրյալ իրավանորմերի՝ գործով հաստատված փաստերի հետ միասին գնահատման և համալիր վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում, «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության՝ թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրի նախագիծը չկնքելու և չներկայացնելու արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 13.11.2020թ.-ին միակողմանի լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ թիվ 2 համաձայնագիրն ուղարկելու պահին տեղեկագրում հրապարակված գնումների պլանում գնման առարկայի համար նախատեսված էր ընդամենը 33 580 000 (երեսուներեք միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, այսինքն, թիվ 2 համաձայնագիրը ուղարկելու պահին գնումների պլանում համաձայնագրում նշված գումարի չափով ֆինանսական միջոցներ չեն եղել նախատեսված, ինչով պայմանավորված Պատվիրատուն իրավունք չուներ թիվ 2 համաձայնագիրը հաստատման նպատակով ուղարկել Մասնակցին, ապա Բողոքներ քննող անձ փաստում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 2-րդ կետի.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացվում է … «դրամ» բառը, եթե սույն ենթակետի «ա»-«ժթ» ենթակետերում նշված չափման միավորներից որևէ մեկը կիրառելի չէ,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը,

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման

միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը,

6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

Նույն կարգի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.07.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 46 000 000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ: ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի և «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.07.2020թ.-ին կնքված Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 Համաձայնագրի համաձայն՝ նախատեսվել են ֆինանսական միջոցներ 13 800 000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար չափով: Պատվիրատուն 11.11.2020թ.-ին ներկայացված ծանուցմամբ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՀՀ ԳՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրի նախագիծը, որի թիվ 2 համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ Ծովակ համայնքի խմելու ջրի ջրագծի ցանցի վերանորոգման աշխատանքների համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ 32 200 000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, որի արդյունքում ընդհանուր նախատեսված ֆինանսական միջոցները կազմել են 46 000 000 (քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ: Նույն համաձայնագրի թիվ 1 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով՝ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 45331117: ՀՀ

Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի կողմից 24.09.2020թ.-ին հաստատված և 25.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45331117, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 13 800 000, չափման միավորը՝ դրամ, իսկ նույն՝ 45331117 (CPV) կոդով խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար (սուբվենցիա 70%) գումարը նշվել է 32 200 000 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից Մրցույթը կազմակերպվել է իրավական հիմքի առկայության պայմաններում: Սույն դեպքում, Կարգի 16-րդ կետի իմաստով, գնումների պլանը հաստատված և հրապարակված է, գնման առարկան ներառված է գնումների պլանում: Ինչպես նաև www.gnumner.am կայքում առկա ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակի համայնքապետարանի 25.09.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45331117, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ գնանշման հարցում, գումարը՝ 13 800 000, չափման միավորը՝ դրամ, իսկ նույն՝ 45331117 (CPV) կոդով խմելու ջրի վերանորոգման աշխատանքների համար (սուբվենցիա 70%) գումարը նշվել է 32 200 000 ՀՀ դրամ: Այսինքն Մասնակցի դիրքորոշմամբ նշված այն պնդումները, որ թիվ 2 համաձայնագիրը ուղարկելու պահին գնումների պլանում համաձայնագրում նշված գումարի չափով ֆինանսական միջոցներ չեն եղել նախատեսված՝ չի համապատասխանում իրականությանը, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն դեպքում Պատվիրատուի գործողությունները բխել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և եղել են իրավաչափ:

Անդրադառնալով նաև «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից նշված այն պնդմանը, որ Մասնակցի կողմից լիազորված անձ Հասմիկ Կառլենի Հարությունյանը, ով հանդիսանում է ընկերության հաշվապահը և միաժամանակ գնումների մասով մասնագետը վարակվել էր Covid 19 հիվանդությամբ և մինչև 26.11.2020թ.-ը մեկուսացված էր եղել, ինչով պայմանավորված վերջինս հնարավորություն չի ունեցել պայմանագրով ստանձնած պարտավորությունների կապակցությամբ արձագանքել Պատվիրատուի ծանուցումներին և համապատասխան գործողություններ իրականացնել, ապա Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակիցը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի

3-րդ մասով սահմանված կարգով, չի ապացուցում որ թիվ 2 համաձայնագիրը չկնքելն անհնար էր Մասնակցի աշխատակից Հասմիկ Հարությունյանի Covid 19 հիվանդությամբ վարակվելով պայմանավորված, քանի որ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից կնքված և ստորագրված տարբերակով Պատվիրատուին է ներկայացվել թիվ 2 համաձայնագիրը, սակայն փոփոխված ձևով, ինչը վկայում է այն մասին, որ Մասնակիցը հնարավորություն է ունեցել արձագանքել Պատվիրատուի կողմից ներկայացված ճանուցմանը, ավելին՝ վերջինիս կողմից իրականացվել է համապատասխան գործողություններ, այն է՝ ներկայացվել է թիվ 2 համաձայնագրի օրինակը, ինչով պայմանավորված արձանագրվում է, որ Մասնակցի կողմից ներկայացված վերոնշյալ պնդումները չեն համապատասխանում իրականությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է

պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17150-2020 գրությամբ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/195 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ